ԿԱՆԹԵՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ **Քարտեզների օգտագործումը միջառարկայական կապերի տեսանկյունից . Հայոց պատմություն և աշխարհագրություն**

ԿԱԶՄՈՂ՝ Արմինե Թորոսյան

ԽՈՒՄԲ՝ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

2023

Քարտեզների օգտագործումը միջառարկայական կապերի տեսանկյունից . Հայոց պատմություն և աշխարհագրություն

Ներածություն, թեմայի արդիականությունը

«Միջառարկայական կապերը որպես դիդակտիկ պայման, ապահովում են բնության մեջ գործող օբյեկտիվ հարաբերությունների արտացոլումը դպրոցական բնագիտական առարկաների բովանդակության հետևողական արտացոլում»: Վ.Ն. Ֆյոդորով, Դ.Մ. Կիրյուշկին

Ժամանակակից հասարակությունն ավելի ու ավելի բարձր պահանջներ է առաջադրում 21-րդ դարի դպրոցի շրջանավարտների համար: Նրանք ոչ միայն պետք է տիրապետեն առարկայական գիտելիքներին և հմտություններին, այլև կարողանան դրանք կիրառել տարբեր իրավիճակներում: Միևնույն ժամանակ, բավականաչափ լուծված չէ ժամանակակից սոցիալ-տնտեսական, մասնագիտական, գիտական և առօրյա կյանքին բնորոշ միջառարկայական խնդիրների լուծման համար ձեռք բերված գիտելիքներն ու հմտությունները կիրառելու սովորողների կարողությունների զարգացման խնդիրը:

Այս հակասության լուծման ուղիներից մեկը կրթական գործընթացում միջառարկայական կապերի իրականացումն է, ուսումնասիրված նյութի և հասարակության սոցիալ-էկոլոգիական և տնտեսական խնդիրների փոխհարաբերությունները, դպրոցականների ապագա մասնագիտական գործունեության խնդիրները:

Միջառարկայական կապերն անփոխարինելի դիդակտիկ պայման են գիտությունների, այդ թվում՝ բնական և հասարակական գիտությունների հիմունքների իմացության նկատմամբ նրանց հետաքրքրության զարգացման համար:

Յուրաքանչյուր գիտություն զարգացման ընթացքում ստեղծել ու մշակել է իր ուսումնասիրման մեթոդների համակարգը: Այդպիսի գիտությունների շարքին է դասվում նաև աշխարհագրությունը՝ իր հետազոտման մեթոդների ուրույն համակարգով: Այդ համակարգում առանձնանում է քարեզագրական մեթոդը, որը ներառում է քարտեզագրման և քարտեզների ընթերցման մեթոդների կիրառումը ուսումնական պրոցեսում:

Հայտնի է, որ ցանկացած քարտեզագրվող երևույթ չէ, որ աշխարհագրական է, սակայն աշխարհագրական ցանկացած երևույթ կարող է քարտեզագրվել: Նույնը կարելի է ասել նաև պատմական երևույթների քարտեզագրման մասին:

Ուսումնական աշխատանքի ընթացքում սովորողները ծանոթանում են տարաբնույթ երևույթների հետ, որոնք սովորաբար մատուցվում են արդեն պատրաստի քարտեզների հետ, սակայն սովորողը երևույթն ավելի լավ է պատկերացնում ու ընկալում, երբ փորձում է դա պատկերել սեփական քարտեզի վրա՝ համադրելով պատմաաշխարհագրական գիտելիքները, կարողությունները և հմտությունները:

Թեմայի արդիականությունը: Միջառարկայական կապերը կարող են զգալիորեն բարձրացնել ուսուցման և դաստիարակության արդյունավետությունը, եթե դրանք ներառվեն արտադպրոցական գործունեության տարբեր ձևերի և բովանդակության մեջ: Միջառարկայական կապերում քարտեզագրական մեթոդների կիրառումը հսկայական կրթական հնարավորություններ են ստեղծում աշակերտների պատմաաշխարհագրական մտածողության, աշխարհայացքի ձևավորման, բարոյական որակների, գեղագիտական ապրումների զարգացման համար:

Պատմության դասերին քարտեզագրման մեթոդը կարող է կիրառվել տարբեր նպատակներով.
1.սովորեցնում է աշխատել տարբեր բովանդակության քարտեզների հետ
2.զարգացնում է սովորողի տարածական պատկերացումը
3.միջառարկայական կապերի միջոցով զարգացնում է աշխարհագրական և պատմական մտածողությունը
4.սովորողները կարողանում են իրականացնել տեղեկույթի մշակում և ներկայացում՝ քարտեզագրման և շրջանացման միջոցով:

Միջառարկայական մոտեցումը լուծում է կրթության առարկայական համակարգում առկա հակասությունը և փոխլրացումը, սովորողների կողմից տարբեր առարկաներից ձեռք բերած գիտելիքների յուրացման և սինթեզի, գործնականում, աշխատանքի և մարդու կյանքում ինտեգրված կիրառման անհրաժեշտության միջև:

21-րդ դարում, երբ առաջացավ գիտելիքը ինտեգրված կերպով կիրառելու, սինթեզելու, գաղափարներն ու մեթոդները մի գիտությունից մյուսը փոխանցելու անհրաժեշտություն , փոխվեց նաև քարտեզագրական մեթոդի նշանակությունն ու կիրառելիությունը:

Այժմ քարտեզագրությունը նոր իմաստ է ստացել՝ համատեղելով տարածական տեղեկատվության վիզուալիզացման մեթոդներն ու գործիքները աշխարհագրական տեղեկատվական համակարգերի (GIS) հնարավորությունների հետ՝ գործնական և գիտական խնդիրներ լուծելու համար:

Որևէ տարածքի ուսումնասիրության, տեղորոշման կամ շինարարական աշխատանքների պլանավորման հետ կապված ոչ մի աշխատանք չի կարող իրականացվել առանց քարտեզի: Այդ իսկ պատճառով, արդեն իսկ ամենաժամանակակից էլեկտրոնային ուսումնական միջոցները հագեցած են էլեկտրոնային ինտերակտիվ քարտեզներով:

Հետազոտական խնդիր. ուսումնասիրել դասավանդման գործընթացում քարտեզագրական մեթոդի կիրառման և պատմություն առարկայի դասավանդման մեջ մեթոդի արդյունավետ իրականացման պայմանները և ձևերը, ապահովել միջառարկայան կապերի իրականացումը աշխարհագրության և պատմության դասերին:

Ուսումնասիրության նպատակը՝ միջառարկայական մոտեցման հիման վրա աշակերտների համար պատմության դասաժամերին քարտեզագրական մեթոդի կիրառման և դասավանդման արդյունավետության բարձրացման գիտական հիմնավորումը:

Միջառարկայական կապ հասկացությունը և կապերի տեսակները

Այսօր հանրակրթական դպրոցի կարևորագույն հիմնախնդիրներից մեկն այն է, որ ուսուցումը լինի աշակերտակենտրոն, այսինքն՝ աշակերտը հանդես գա ոչ թե որպես օբյեկտ, այլ որպես սուբյեկտ: Աշակերտակենտրոն կրթության դեպքում ուսուցիչը տարբեր մեթոդներ գործադրելով ոչ միայն պետք է բարձրացնի աշակերտի գործունությունը, այլև պետք է աշակերտներին տրամաբանելու և ստեղծագործելու հնարավորություն տա: Այստեղ նրան օգնության են գալիս ուսուցման և արտաուսումնական աշխատանքների ընթացքում իրականացվող միջառարկայական կապերը:

Ուսուցման գործընթացում միջառարկայական կապեր ստեղծելու հիմնահարցը նույնքան հին է, որքան բուն իսկ առարկայական ուսուցումը:

Մանկավարժական գրականության մեջ գոյություն ունի միջառարկայական կապ հասկացության ավելի քան 30 բնորոշում:

Միջառարկայական կապերի մասին Յ.Ա.Կոմենսկին իր «Մեծ դիդակտիկա» աշխատությունում նշում է, որ ուսումնական առարկաների փոխկապակցված ուսուցումը երեխաներին սովորեցնում է բացահայտել ուսումնասիրվող առարկաների և երևույթների միջև եղած կապերը. «Ամեն ինչ ամրապնդել բանականության հիմունքներով նշանակում է ամեն ինչ սովորել՝ մատնացույց անելով պատճառները, այսինքն՝ ոչ միայն ցույց տալ, թե ինչպես է այս կամ այն բանը տեղի ունենում, այլ նաև ցույց տալ, թե ինչու դա այլ կերպ լինել չի կարող: Չէ՞ որ իմանալ որևէ բան նշանակում է իրը ճանաչել իր փոխկապակցվածության մեջ»: Մանկավարժության մեջ միջառարկայական կապերի հիմնահարցին անդրադարձել են (Յ. Ա. Կոմենսկի, Հ. Պեստալոցի, Ֆ. Հերբարտ, Ա. Դիստերվեգ, Խ. Աբովյան և ուրիշներ) գերազանցապես ճանաչողական առումով՝ միջառարկայական կապերի իրականացումը համարելով ուսուցման բարելավման կարևոր միջոց: Մանկավարժագետներին զբաղեցրել է նաև միջառարկայական կապերի

դասակարգման հարցը: Այսօր էլ միջառարկայական կապերի դասակարգման գործընթացում չկա միասնական մոտեցում, այսինքն՝ տեսաբան մանկավարժագետները տարբեր հիմունքներով են դասակարգում միջառարկայական կապերը:

Մի շարք հետազոտությունների (Օ. Լ. Ժուկ, Ս. Ն. Սիրենկո, Մ. Ն. Բերուլավա և այլն) վերլուծությունը հնարավորություն տվեց պարզաբանել միջառարկայական կապերի սահմանումը դպրոցական կրթության մեջ: Միջառարկայական կապեր .
1) սա հարաբերությունների հաստատումն է (շարունակականության, սինթեզի, ինտեգրման միջոցով) երկու առարկաների ուսումնական նյութի կառուցվածքային տարրերի միջև
2) ուսումնական նյութի կառուցվածքային տարրերը երկու կամ ավելի առարկայական ոլորտներից միավորելով մեկ իմաստային բլոկի (մոդուլի) և այն օգտագործել նյութի ուսումնասիրության կամ միջառարկայական խնդիրների լուծման գործընթացում
3) ուսուցման և դաստիարակության գործընթացների ինտեգրում ուսանողների կողմից գործերի, նախագծերի մշակման միջոցով՝ գիտակրթական արդյունքները գործնականում ներմուծելու միջոցով:

Միջառարկայական կապերը դասակարգելիս ոմանք (Մ. Ն. Սկատկին, Ն. Մ. Վերզալին, Պ. Գ. Կուլագին և ուրիշներ) հիմք են ընդունում ժամանակային գործոնը: Ժամանակային գործոնի՝ լայն տարածում ունի միջառարկայական կապերի հետևյալ դասակարգումը՝

1) ուղեկցվող կամ հորիզոնական կապեր. պայմանավորված են երկու առարկաների համաժամանակյա տեղեկատվական նյութերով, օրինակ՝ Հայկական գրչության կենտրոնների տարածվածության ներկայացումը աշխարհագրական քարտեզի օգնությամբ:

2) նախորդող կամ ուղղահայաց կապեր. գործադրվում են ուսումնական տարվա համեմատաբար կարճ, բայց հաջորդական ժամանակաշրջաններում (քառորդներ, կիսամյակներ) երկու առարկաների տեղեկատվական նյութեր ուսումնասիրելիս,

3) հեռանկարային կապեր. պայմանավորված են մի քանի առարկաների այնպիսի տեղեկատվական նյութով, որ գործում է առավել երկար ժամանակ՝ 1-3 տարի:

Միջառարկայական կապերի օգտագործումը հնարավորություն է տալիս միևնույն առարկայի կամ երևույթի, անձի և իրադրության մասին տարբեր առարկաներից ձեռք բերված գիտելիքներն ու տեղեկությունները միավորել մեկ ընդհանուր համակարգի մեջ: Դա օգնում է բացատրվող նյութի ճիշտ ու խոր յուրացմանը, անցածի ու անցնելիքի միջև տրամաբանական կապերի ստեղծմանը, ձեռք բերած գիտելիքների ու կարողությունների փոխանցմանն ու օգտագործմանը, որը հսկայական զարգացնող արժեք ունի երեխաների համար: Միջառարկայական կապերի օգտագործումն իր որոշակի տեղը պետք է ունենա ուսումնական աշխատանքի ընդհանուր համակարգում և նույնիսկ յուրաքանչյուր առանձին նյութի ուսումնասիրության ընթացքում:

Դասի ժամանակ կամ նյութի ուսումնասիրության ընթացքում միջառարկայական կապերը կարող են օգտագործվել երեք տարբեր պահերին՝ նայած անհրաժեշտությանը և նյութի բնույթին.

1. Ուսումնասիրվող նյութի շուրջ անցկացվող նախապատրաստական զրույցի ընթացքում ուսուցիչը կարող է օգտագործել ուսումնական այլ առարկաների և այլ գիտությունների տվյալները նյութի վերաբերյալ ավելի պարզ պատկերացում տալու համար, որպեսզի դրանով իսկ հող ստեղծվի բուն նյութի յուրացման համար:

2. Նյութի մշակման ժամանակ,երբ աշակերտների ընթերցած այս կամ այն հատվածի շուրջ որոշակի բացատրություններ են տրվում ուսուցչի և աշակերտների կողմից, կարելի է համանման փաստեր բերել նաև արդեն անցած նյութերից, համեմատություններ, հակադրություններ ու զուգահեռներ անցկացնել՝ միտքն ավելի պարզ, գաղափարներն ու հասկացություններն ավելի մատչելի դարձնելու համար: Այսպիսի օժանդակ կամ լրացուցիչ փաստարկումներ աշակերտներից պետք է պահանջել նաև նրանց.
1. պատասխանելու ժամանակ, որը շատ կարևոր է ոչ միայն նյութը խոր յուրացնելու, այլև ինքնուրույն եզրակացությունների հանգելու կարողություն մշակելու տեսակետից:
2. Ամփոփման ժամանակ լայնորեն կարելի է դիմել միջառարկայական կապերի օգտագործմանը՝ կատարելով հեռավոր կամ կողմնակի էքսկուրսիաներ, որոնք թույլ են տալիս ազատ դատողություններ անել՝ առանց հիմնականից շեղվելու, որովհետև այդ դեպքում ընդհանուրը նկատի ունենք և ոչ թե կոնկրետ նյութը: Միջառարկայական կապերի այսպիսի օգտագործումն ավելի շատ աշակերտների կողմից է կատարվում [1] :

Այսպիսով, ժամանակակից մանկավարժական գիտությունը պնդում է, որ ուսանողի կողմից գիտելիքների արդյունավետ յուրացման և տարբեր առարկաների միջոցով նրա մտավոր զարգացման համար կարևոր է լայն կապեր հաստատել ինչպես ուսումնասիրվող դասընթացների տարբեր բաժինների, այնպես էլ առհասարակ տարբեր առարկաների միջև: Արժեքավոր են ոչ միայն հարակից առարկաների հետ կապերը, այլ նաև ներառարկայան կապերը: Սովորողների ինտելեկտուալ ստեղծագործական կարողությունների զարգացման համար ինտեգրման մեծ նշանակությունը բացատրվում է նրանով, որ ժամանակակից գիտության մեջ աճում է միտումը դեպի գիտելիքի սինթեզ, դեպի գիտելիքների օբյեկտների հանրության իրացում և բացահայտում: Միաժամանակ գիտնականները պնդում են, որ ապագայում այս միտումը պետք է անընդհատ աճի:

Քարտեզագրական մեթոդի էությունը

Քարտեզագրությունը, որպես գիտության առանձնահատուկ ոլորտ, կազմավորվել է վաղուց և ունի իր պատմությունն ու զարգացման ինքնուրույն ճանապարհը: Տեղեկատվության պատկերման և հետազոտման նրա մեթոդները լայնորեն կիրառվում են այն օբյեկտների ու երևույթների ուսումնասիրման և հետազոտման համար, որոնք ընդգրկվում են երկրի մասին համարյա բոլոր գիտությունների մեջ: Քարտեզը, շնորհիվ իր լեզվի զննողականության, դիտողականության և

պատկերավորության, թույլ է տալիս տարածքների ցանկացած ընդգրկմամբ իրականացնել տեղեկատվության որոնում, հաշվարկում և հետազոտում: Ժամանակակից քարտեզը բավականին ճշտորեն արտացոլում է երկրի և երկրային մարմինների բազմազան օբյեկտների ու երևույթների որակական և քանակական բնութագրերը[2, էջ 5]:

Ժամանակակից քարտեզագրությունը ներառնում է՝
*գիտության տեսական հիմունքները (այդ թվում՝ քարտեզագրություն առարկայի, մեթոդների և քարտեզի մասին ուսմունքը),
*քարտեզագրական գիտության և արտադրության պատմությունը,
*քարտեզագրական աղբյուրագիտությունը,
*քարտեզների նախագծման և կազմման տեխնոլոգիան և տեսությունը,
*քարտեզների օգտագործման տեսությունը և մեթոդները [2, էջ 9]:

Դեռևս հնագույն ժամանակներից, մարդիկ օգտագործել են քարտեզագրման մեթոդը՝ ունեցած տեղեկատվությունը սերունդներին փոխանցելու նպատակով: Հնագույն քարտեզներից պահպանվել են մ. թ. ա. 14-11 հազար տարի առաջ կենդանիների ոսկորների և քարերի վրա փորագրված քարտեզները: Մ. թ. ա 6-4 դարերում ընդլայնվում է մարդկանց պատկերացումը աշխարհի մասին, որոնք արտահայտվում են քարտեզների մեջ:

Դրան նպաստել է Ալեքսանդրիայի թանգարանը, որը շուրջ 40 տարի տնօրինել է աշխարհագրագետ և մաթեմատիկոս Էրատոսթենեսը : Նրա աշխատություններից հայտնի է «Գեոգրաֆիան», որն էլ դարձավ երկրի մասին պատմող գիտության անվանումը: Քարտեզագրական հետազոտության մեթոդի նշանակությունը գիտակցել և կիրառության մեջ է դրել դեռևս Պտողմեոսը: Երկրագնդի մասին բավականին լուրջ աշխատություններ են կազմել Պտղոմեոսը, Ստրաբոնը և այլ պատմաաշխարհագետներ:
Քանի որ այդ ժամանակաշրջանում քարտեզագրական մեթոդը նոր էր սկսում զարգանալ, աշխարհագետները չէին կարող մանրամասն ուսումնասիրել և ներկայացնել երկրի հայտնի տարածքները: Իսկ այն տարածքները, որոնք դեռ ուսումնասիրված չէին, կոչվել են լատիներեն տերրա ինկոգնիտա (անծանոթ երկիր)՝ քարտեզագրելով առանձին պայմանական նշանով՝ ստիպակ գույնով:
Հիշարժան են բաբելոնյան քարտեզը, որը կազմվել է մ. թ. ա 6-րդ դարում: Քարտեզագրությունը զարգացման նոր փուլ է թևակոխում Խաչակրաց նոր արշավանքների ժամանակ: Եթե մինչև այդ քարտեզի կենտրոնում նշվում էր այն պետությունը, ով կազմել էր, ապա խաչակիրների ժամանակ քարտեզի կենտրոնում Երուսաղեմն էր: Դարեր հետո Մարտին Բեհայմի կողմից ստեղծվեց միջնադարյան

առաջին գլոբուսը: Բայց ենթադրվում է, որ այն ստեղծվել է Կրատոսի կողմից մոտավորապես մ. թ. ա 150 թ-ին: Դեռևս միջին դարերում մեթոդի զարգացմանը նպաստել է Մերկատորը, ով առաջինը կարողացավ քարտեզագրական հետազոտության մեթոդը տեղայնացնել ծովային քարտեզագրության մեջ: Քարտեզագրական հետազոտության մեթոդի նշանակությունը մեծացավ աշխարհագրական հայտնագործություններից հետո, ինչի շնորհիվ ցամաքի մասերն աստիճանաբար սկսեցին ճիշտ ուրվագծվել քարտեզների վրա:

Սակայն բոլոր ժամանակաշրջանների քարտեզագիրներին միավորում էր նույն նպատակը. ստեղծել տարբեր բովանդակության քարտեզներ՝ աշխարհագրական, կլիմայական, օգտակար հանածոների, պատմական իրադարձությունների և այլն, որոնք կհեշտացնեին մարդու տնտեսական գործունեությունը և կլինեն տեղեկույթի աղբյուր: Շատ մեծ է աշխարհագրական քարտեզի դերն ու նշանակությունը նաև հասարակական գիտությունների համակարգում: Ոչ մի աշխատանք, կապված տարածքի ուսումնասիրման հետ, չի կարող իրականացվել առանց քարտեզի:



Poseydonius's map, 150-130 B.C.
Պեսեյդոնուսի քարտեզը Ք. Ա. 150-130 թ.թ.

Օրինակ, պատերազմի ժամանակ ամբողջ ստրատեգիական, օպերատիվ և տակտիկական խնդիրները լուծվում են տարբեր մասշտաբի քարտեզների օգտագործման շնորհիվ: Հետևաբար, բնական է, որ քարտեզագրական մեթոդը կիրառվում է բնական, սոցիալ-տնտեսական, տեխնիկական, տնտեսագիտական ու ռազմական տարբեր գիտությունների ու նրանց ճյուղերի կողմից[2, էջ 43]: Քարտեզագրական մեթոդի կիրառման ժամանակ գործ ունենք պայմանական նշանների կամ պայմանական

գծագրական նշագծերի (նիշերի) համակարգի հետ, որն այլ կերպ անվանում են «քարտեզի լեգենդա»: Այդ նշաններն օգտագործվում են քարտեզների վրա տարբեր օբյեկտները և երևույթները, կամ դրանց բնութագրերը պատկերելու համար և քարտեզի թեմատիկ բովանդակությունն արտահայտելու համար:

Պատմաշրջանային քարտեզներում առավել օգտագործվող այս մասնավոր նշանների տեսակներն են.

1. Մակերեսային- քարտեզի վրա մակերեսային պայմանական նշաններով պատկերում են երկչափ տարածական նշանակություն ունեցող օբյեկտները, որոնք պիտի նշված լինեն տվյալ մաշտաբ ունեցող քարտեզի վրա:
2. Գծային- քարտեզի վրա գծային պայմանական նշանները գրաֆիկական տարբեր գծագրման գծեր են , որոնցով պատկերում են գծային տարածական նշանակություն ունեցող օբյեկտները, կարող են ունենանալ տարբեր գույներ, հաստություն, ընդհատելիություն ևն: Օրինակ, պետական և վարչական սահմանագծերը:
3. Կետային-կետային պայմանական նշաններով նշվում են այն օբյեկտները, որոնք տարածության մեջ չափեր ունեն, բայց չափերը չեն արտահայտվում տվյալ քարտեզի վրա: Դրանք իրենցից ներկայացնում են տրված չափի համար բավականին բարդ պատկերներ, որոնք պարզ են բոլորին, անկախ ազգությունից: Պատկերի կենտրոնը համապատասխանում է տարածության մեջ օբյեկտի գլխավոր կետի դիրքին: Համաչափ օբյեկտի դեպքում, պատկերի կենտրոնը համապատասխանում է պատկերի կենտրոնին: Օրինակ, մայրաքաղաքի պատկերում կարմիր գույնի կետով:
4. Մակագրություն-մակագրությունները հանդիսանում են ոչ մասշտաբային օժանդակ պայմանական նշաներ, որոնք նկարագրում, պարզաբանում և բնութագրում են տվյալ օբյեկտը կամ տվյալ քարտեզի առանձնահատկությունները: Քարտեզների վրա մակագրելու համար օգտվում են հատուկ տպագրական տառաչափերի հավաքածուներից:
5. Ճարժման գծեր -այս այս մասնավոր նշանի միջոցով հնարավոր է ներկայացնել շարժման երթուղին, ռազմական գործողությունները, զարգացումները ևն:
6. թվեր, փաստեր, տարեթվեր- քանի որ քարտեզի վրահնարավոր չէ մեծ ծավալի տեղեկատվություն ներկայացնել ,օգնություն են հասնում այս այս մասնավոր նշանները: Օրինակ, Հայկական սփյուռքի տարածվածության քարտեզում, որպես փաստեր կարող են ներկայացվել հայերի թվաքանակը, կամ որ թվականին է ձևավորվել օջախը:

7. որակական ֆոն -գունային աստիճանավորման միջոցով ներկայացվում է երևույթի տարածման առանձնահատկությունը, օրինակ կարել է ներկայացնել , թե որ տարածքներն են ավելի վաղ զարգացել ,իսկ որոնք՝ ուշ:

Այսպիսով, քարտեզագրական հետազոտության մեթոդը պատմաաշխարհագրական հետազոտությունների մեծ մասի անբաժանելի մասն է: Առանց այս մեթոդի կիրառման շնորհիվ հնարավոր չէ ստանալ տեղեկություն, իրադարձությունները արտահայտել ավելի ակնառու կերպով, ինչպես նաև կատարել ստացված տեղեկույթի մշակում և ներկայացում:

Պատմության և աշխարհագրության միջև առկա միջառարկայան կապերի դրսևորման հիմնական ուղղությունները

Պատմության և աշխարհագրության միջառարկայան կապերի շնորհիվ ձևավորվել է միասնական գիտություն՝ պատմական աշխարհագրությունը: Այն հասարակական գիտության ճյուղ է, որը համալիր ուսումնասիրում է որևէ երկրի կամ տարածքի ֆիզիկական, տնտեսական, քաղաքական և բնակչության աշխարհագրությունն ըստ դրանց պատմական զարգացման ժամանակաշրջանների: : Պատմական աշխարհագրությունն ընդգրկում է՝ պատմական նկարագրություն, ինչպես նաև այլ տվյալներ. երկրի կամ շրջանի ֆիզիկական աշխարհագրական նկարագրությունը (մակերևույթը, կլիման, ջրագրությունը, հողաբուսական ծածկն ու կենդանական աշխարհը, օգտակար հանածոները և այլն), բնակչության աշխարհագրությունը (բնակչության առաջացումը, ձևավորումը, ազգագրական կազմը, տեղաբաշխումը, տեղաշարժերը), գյուղատնտեսության աշխարհագրությունը (արտադրության ու տնտեսական կապերի աշխարհագրությունն ըստ ճյուղերի և շրջանների), քաղաքների աշխարհագրությունը՝ ըստ պատմական ժամանակների քաղաքների ու վարչական բաժանումների բնութագրումն ու դրանց սահմանների պարզաբանումը, պատմությունը վայրերի աշխարհագրական դիրքի ճշտումների, քաղաքների, բնակավայրերի, բերդերի ու ամրոցների, մշակույթի կենտրոնների տեղաբաշխումը, հասարակական շարժումների աշխարհագրությունը և այլն:



Nicola Senson's Map of Armenia 1658 y.

Նիկոլաս Սենսոն (1600-1667), ֆրանսիացի քարտեզագիր: Հայաստանի պատմաաշխարհագրական քարտեզ

Պատմական աշխարհագրության համար սկզբնաղբյուրներ են ծառայում պատմագիրների ու ժամանակագիրների գրավոր վկայությունները, ճանապարհորդների օրագրերն ու նոթերը, տարբեր ժամանակներից մեզ հասած քարտեզները, նյութական մշակույթի մնացորդները, ժողովրդի ավանդություններն ու զրույցները, լեզվաբանական ու տոպոնիմիական նյութերը և այլն:

Պատմական աշխարհագրության մեջ առանձնացնում են երկու ինքնուրույն ուղղություններ, որոնք պայմանականորեն անվանում են պատմական և աշխարհագրական:

Պատմական ուղղությունն զբաղվում է անցյալ ժամանակաշրջաններում սոցիալ-տնտեսական, քաղաքական և հոգևոր-մշակութային երևույթների տարածքային դիֆերենցման և տարբեր երկրներում ու տարածաշրջաններում դրանց զարգացման

առանձնահատկությունների բացահայտման ու մեկնաբանման խնդիրներով: Պատմական գիտությունների կազմում պատմական աշխարհագրությունը սովորաբար այնպիսի օժանդակ դիսցիպլինի դեր է կատարում, ինչպիսիք են, օրինակ, հերալդիկան (զինանշանագիտությունը) կամ նումիզմատիկան (դրամագիտությունը:

Այս ուղղության հետաքրքրությունների կենտրոնում գտնվում են անցյալ ժամանակաշրջաններում աշխարհագրական թաղանթի բնածին ոլորտների (բնական լանդշաֆտների) զարգացման օրինաչափությունները, որոնց բացահայտումը օժանդակում է նրանց ժամանակակից կառուցվածքի և զարգացման միտումների խորքային ուսումնասիրությանը:
Պատմական աշխարհագրության գիտական արդյունքների սինթեզման շնորհիվ հնարավոր է դառնում վերականգնել աշխարհագրական թաղանթի ամբողջական պատկերի ու լանդշաֆտների՝ մարդու ազդեցությամբ կրած փոփոխությունները, հասարակության և բնության տարածքային կազմակերպմաան առանձնահատկությունները, բնակչության, տնտեսության, մշակույթի, պետական կարգի ու սահմանների փոփոխությունները պատմական տարբեր ժամանակաշրջաններում և դրա միջոցով բացահայտել և բացատրել ներկա վիճակը և զարգացման միտումները[3, էջ 187]:

Ըստ պատմաբան-աշխարհագրագետ Թ. Հակոբյանի, այս ուղղությունները նաև պատմական աշխարհագրության աղբյուրներն ու հիմքն են, որոնց շնորհիվ այդ միջառարկայական կախը ոչ թե զուտ մեխանիկական է, այլ միասնականոության դրսևորում է: Այդ միասնական կապին նա առաջին անգամ անդրադարձել է 1960 թ հրատարակված ‘Հայաստանի պատմական աշխարհագրություն’ աշխատության մեջ, որը հետագայում մի քանի անգամ վերահրատարակվել [4, էջ 4-5]:

Ցանկացած տարածքի պատմաաշխարհագրական ուսումնասիրման ժամանակ, որպես պատմության և աշխարհագրության միջև միջառարկայական կապի դրսևորման հիմնական ուղղվածություններից կարելի է առանձնացնել.
1.ֆիզիկաաշխարհագրական բնութագիր

2.կլիմայական պայմանները

3. ջրագրությունը

4.բուսականությունը և կենդանական աշխարհը

5.բնական հարստությունները

6.բնակչությունը

7.գլխավոր ճանապարհները

8.աշխարհագրական դիրքը

9.վարչատարածքային կառուցվածքը

10.տնտեսական կյանքը[4, էջ 460-464]:



Արդյունքում,

Սեբաստիան Մունսթեր, գերմանացի քարտեզագիր: Հայաստանը 1544-45թթ

աշխարհագրական և պատմական ուղղությունների համադրման, և ավելի հստակ ուղղվածության ուսումնասիրությունների արդյունքում, հնարավոր է դառնում սինթեզել աշխարհագրական և պատմական գիտական արդյունքները: Դրա արդյունքում հնարավոր է վերականգնել հասարակության և բնության տարածքային կազմակերպման առանձնահատկությունները տարբեր պատմական ժամանակաշրջաններում՝ դրա միջոցով բացահայտելով և բացատրելով պատմական ներկա վիճակը և զարգացման միտումները[3, էջ 188]:

.

Միջնակարգ կրթության կարողունակությունների ձևավորումը միջառարկայական կապերի միջոցով

2021 թվականին ՀՀ կառավարության կողմից հաստատված Հանրակրթության պետական չափորոշիչը ելնում է կարողունակությունների վրա հիմնված մոտեցումից և սահմանում է շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջները՝ ըստ կրթական աստիճանների (կարողունակություններ (կոմպետենցիաներ)

և ըստ կրթական աստիճանների ուսումնառության՝ ակնկալվող վերջնարդյունքներ), ուսումնական բնագավառները, դրանց բովանդակությանը ներկայացվող պահանջները, հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, ուսումնական պլանի և առարկայացանկերի ձևավորման հիմնական սկզբունքները, սովորողների գնահատման ձևերը, սանդղակը, հաշվառման կարգը:

Կարողունակությունը անհատի համալիր բնութագրիչ է. այն գիտելիքների, հմտությունների, վերաբերմունքի և արժեքների համակարգ է, որը թույլ է տալիս այս կամ այն ոլորտում հաջողությամբ լուծելու որոշակի խնդիրներ:

Համաձայն այս սահմանման, եթե որևէ մեկը հավակնում է կարողունակ լինել որևէ բնագավառում, ապա նա պետք է տիրապետի այդ բնագավառին բնորոշ որոշակի գիտելիքների, հմուտ լինի այդ բնագավառում որոշակի գործունեություն ծավալելու, պետք է ունենա արժեքային որոշակի համակարգ և կարողանա իր դիրքորոշումն արտահայտել այդ բնագավառի որոշակի հարցադրումների, երևույթների վերաբերյալ:

ՀՀ կառավարության կողմից հաստատված Հանրակրթության պետական չափորոշչով սահմանվել են միջնակարգ կրթության հետևյալ ութ կարողունակությունները.

1) լեզվական գրագիտություն և կարողունակություն,

2) սովորել սովորելու կարողունակություն,

3) ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն,

4) ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն,

5) թվային և մեդիա կարողունակություն,

6) մշակութային կարողունակություն,

7) մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողունակություն,

8) տնտեսական կարողունակություն:

Թվարկված կարողունակությունները ձևավորվում են ուսումնական գործունեության տարատեսակ ձևերի, ուսուցման փոխներգործուն մեթոդների և տեխնոլոգիաների կիրառման արդյունքում: Առավել արդյունավետ կարող են լինել ուսումնական գործունեության այնպիսի ձևերը, ինչպիսիք են՝ նախագծային աշխատանքը, հետազոտությունը, բանավեճը, ուսումնական ֆիլմերի դիտումը և քննարկումը, էքսկուրսիաները, սեմինարները, դպրոցական գիտաժողովները, ներկայացումները և այլն: Սակայն, բացի այն ամենից, ինչ յուրաքանչյուր ուսուցիչ կարող է անել կոնկրետ առարկայական ծրագրի շրջանակներում, ավելի կարևորվում է միջառարկայան կապերի արտացոլումը՝ մի քանի առարկաների ուսուցիչների համագործակցությամբ: Նման մոտեցումը կարող է հանգեցնել կոմպետենցիաների զարգացման արժեքավոր և արդյունավետ լրացուցիչ արդյունքների:

Նույն դասարանի հետ աշխատող տարբեր առարկաների ուսուցիչները կարող են դասի պլանը կազմել այնպես, որ, համագործակցելով և փոխլրացնելով միմյանց, առավելագույնս նպաստեն այս կամ այն կարողունակության ձևավորմանը: Դրա արդյունքում դասարանը բոլոր առումներով աստիճանական առաջընթաց կունենա, իսկ ուսուցիչները կխուսափեն մասնակի համընկնումներից և կրկնություններից:

Պատմության և աշխարհագրության միջառարկայական փոխլրացնող բաժին է օրինակ, ‘Հայկական լեռնաշխարհ’ թեման: Այն ունի և աշխարհագրական և պատմական ուղղվածության բովանդակության, որի ուղղորդված ուսումնասիրման արդյունքում կարելի է զարգացնել

լեզվական գրագիտության, սովորել սովորելու, ինքնաճանաչողության կարողունակությունները: Իսկ եթե ստացված գիտելիքները

տեղայնացվեն ՝Աշխարհացույց կրթական գործիք՝- ի թվային ռեսուրսների և քարտեզների կիրառմամբ, ապա գործ կունենանք նաև թվային և մեդիա կարողունակության հետ:



Հաշվի առնելով, որ այժմ մեծ տարածում են ստանում թվային քարտեզները և թվայնացված գրադարանները, ՏՏ գործիքների և միջառարկայական կապերի կիրառումը դասապրոցեսը դարձնում է ավելի հետաքրքիր, տեսանելի և նպատակային, նպաստում է կարողունակությունների ձևավորմանը և միջառարկայական կապերի ամրապնդմանը[5]:

Քարտեզագրական և պատմաաշխարհագրական մեթոդների կիրառման օրինակներ

Ընդհանրապես քարտեզագրման մեթոդը համարվում է ուսումնասիրության հնագույն մեթոդներից մեկը: Պատահական չէ, որ քարտեզը համարվում է աշխարհագրության լեզուն, իսկ քարտեզագրական մեթոդը՝ կոնկրետ աշխարհագրական ամենակարևոր մեթոդը: Տարածված ևս մեկ տեսակետի համաձայն՝ ցանկացած քարտեզագրվող երևույթ չէ, որ աշխարհագրական է, սակայն աշխարհագրական ցանկացած երևույթ կարող է քարտեզագրվել: Նույնը կարելի է ասել նաև պատմական և պատմաաշխարհագրական երևույթների մասին: Ցանկացած պապմական իրադարձություն կամ հասարակական երևույթ հնարավոր է քարտեզագրել և ներկայացնել ավելի տեսալի և ուսանելի ձևով:
Նպատակային օգտագործման դեպքում, այս մեթոդը կիրառելի է հայոց պատմություն, պատմություն, իմ հայրենիքը առարկաների ուսուցման գործընթացում, տարբեր թեմաներ ուսումնասիրելիս, ինչպես նաև՝ որպես գործնական աշխատանք:
Այս մեթոդը հնարավորություն է տալիս սովորել աշխատել տարբեր բովանդակության քարտեզների հետ, ստեղծել տարբեր թեմատիկ քարտեզներ, կատարել չափումներ, զարգացնում է սովորողի տարածական պատկերացումը և պատմաաշխարհագրական մտածողությունը:
Ուսումնական աշխատանքի ընթացքում սովորողները ծանոթանում են տարաբնույթ հասարակական երևույթների հետ, որոնք սովորաբար մատուցվում են արդեն պատրաստի քարտեզների միջոցով, սակայն սովորողը երևույթն ավելի լավ է պատկերացնում ու ընկալում, երբ փորձում է դա պատկերել սեփական քարտեզի վրա: Այսինքն, աշակերտը սովորում է կատարելով:
Ներկայացնենք պատմության դասերին քարտեզագրական մեթոդի կիրառման մի քանի օրինակներ:
1. Հայկական լեռնաշխարհի բնաաշխարհագրական քարտեզ.
քարտեզը կիրառելի է ‘Հայոց պատմություն’ և ‘Իմ հայրենիք’ դասընթացների դասավանդման ժամանակ: Քարտեզը պատմության և աշխարհագրության անբաժանելիությունն արտահայտող միջոց է, քանի որ նույն քարտեզը կիրառելի է նաև ‘Հայաստանի աշխարհագրության’ դասընթացն ուսումնասիրելիս:

Բացի այդ, քարտեզի կազմման, ընթերցելու և ուրվագծային քարտեզի վրա աշխատելու ժամանակ օգտագործվում են աշխարհագրական պայմանական նշաններ [6, էջ 6-7]:



2. Հայկական լեռնաշխարհի և Առաջավոր Ասիայի երկրագործական-անասնապահական մշակույթը.

այս թեմատիկ քարտեզի կազմումն ու ընթերցումը ուղղակիորեն կապված են աշխարհագրության հետ, քանի որ Առաջավորասիական անասնապահական մշակույթի տարածման շրջանները համընկնում են Հարավարևմտյան Ասիայի , Մերձավոր Արևելքի և Նեղոսի հովտի շրջանների հետ: Թեմատիկ առումով կա միջառարկայական անհամապատասխանություն, քանի որ 'Աշխարհագրություն' առարկայից տարածաշրջանների ուսումնասիրությունը 8-րդ դասարանում է, գյուղատնտեսության ճյուղերի զարգացման մասին գաղափարը՝ 7-րդ և 11-րդ դասարաններում : Իսկ 'Պատմություն' առարկայից թեման ուսումնասիրվում է 6-րդ, 7-րդ և 10-րդ դասարաններում: Քարտեզի կազմման և ընթերցման ժամանակ օգտագործվում են հետևյալ քարտեզագրական պայմանական նշանները. որակական ֆոն և աստիճանավորում, ստվերարկում, կետային նշաններ, մակագրություններ և այլն [6, էջ 9]:



3. Աշխարհագրական Մեծ հայտնագործություններ- այս թեմայի ուսուցման ժամանակ ևս հանդիպում ենք թեմատիկ անհամապատասխանություն, քանի որ ուսումնասիրվում է ՝Ես և շրջական աշխարհը՝ դասընթացում՝ 4-րդ դասարանում, մասնակիորեն ՝Աշխարհագրություն 6՝ -ում, և ՝Համաշխարհային պատմություն՝ դասընթացից 7-րդ դասարաններում: Քարտեզների բովանդակության հետ կապված ևս կա տարբերություն, քանի որ պատմական բովանդակությամբ քարտեզներում ավելի մեծ ուշադրություն է դարձված փաստագրական թվային տվյալներին, իսկ աշխարհագրականում ՝ աշխարհագրական տարածվածությանը և ընդգրկմանը: Երկու դեպքում էլ որպես պայմանանշաններ օգտագործվում են շարժման գծեր, թվեր, փաստեր, տարեթվեր և մակագրություններ:



Եզրակացություն

Օգտագործված գրականություն

1. ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտ, Հայոց լեզու և գրականություն, 2005, թիվ 3-4,էջ 82:

2.Քարտեզագրություն, Բաբայան Հ.Ա., Մեթանջյան Վ.Ա., ԵՊՀ, Երևան, 2019, էջ 5

3. Լ. Վալեսյան, Աշխարհագրական գիտությունների մեթոդաբանական և տեսական հիմունքներ, Երևան, 2004 թ

4. Թ. Հակոբյան, Հայաստանի պատմական աշխարհագրություն, Երևանի համալսարան, 1984թ

5. https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788

6. Հայաստանի պատմության ատլաս, Հարությունյան Բ., Երևան, 2005, 2006թթ